ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

---

«13» նոյեմբերի 2020թ. № 2/488-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ՍՄԲԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ, ՎԱՀԵ ԽԱՌԱՏՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 09/2020 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի պահանջները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 2-րդ բաժանմունքի մաքսային տեսուչների ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնողներ Սմբատ Սամվելի Հովսեփյանի, Վահե Վլադիմիրի Խառատյանի և Հայկ Վարդգեսի Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ